

«ՄԱՅՐԵՆԻ ՊԱՇՏՊԱՆ» ՇԱՐՔԻՑ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԱՐԱՅԻՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔՆ ՈՒՍՈՒՑԳԻ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՄԻՐԵԼԻ՝ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ,

Ողջունում և շնորհավորում եմ ձեզ ուսուցչի տոնի առթիվ: Մասնագիտական ցանկացած տոն հրաշալի առիթ է նաև իմաստավորելու արվածը և մտորելու անելիքների մասին: Օրվա խորհուրդը մեզ բոլորիս նույնպես հնարավորություն է տալիս գնահատելու անցած ուղին և նախանշելու այն ճանապարհը, որը կապահովի դպրոցի զարթոնքը և կձևավորի ուսուցչի ստեղծագործական ներուժը բացահայտելու և աշակերտների լիարժեք կրթությունը խթանելու համար նպաստավոր պայմաններ:

Կրթության և ստեղծագործական մտածողության զարգացման հայտնի մասնագետ Քեն

Ռոբինսոնի ձևակերպմամբ՝ ուսուցիչը նման է այգեպանի. նա չի աճեցնում բույսը, բայց ստեղծում է պայմաններ, որոնք առավելագույնս նպաստում են այդ աճին: Այդ պայմանների ձևավորումը հնարավոր չէ առանց ուսուցիչների և աշակերտների համագործակցությունն ապահովող ստեղծագործ միջավայրի, և ուսուցչական գործի ամենամեծ գնահատելի կողմը մասնագիտական շարունակական կատարելագործումն է աշակերտների հայացքների լույսի ներքո:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ բոլորիդ և մաղթում հաջողություններ ձեր նվիրական գործում:

ՀՀ կրթության և գիտության նախարարություն



Դոնի Ռոստովի թիվ 83 դպրոցի հայոց լեզվի «Արևիկ» խմբակի սաները իրենց սիրելի ուսուցչուհու Սոնա Կարապետյանի հետ:

Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող վերջին ամիսների իրադարձությունները՝ հեղափոխությունը, Ֆրանկոֆոնյայի գազաթնաժողովը, Շառլ

Ազնավուրի մահը և այլ համահայկական արձագանքներ ստացած գործընթացներ մեկ անգամ ևս կարևորեցին, որ աշխարհի որ հորիզոնում էլ գտնվելու լինենք մենք

«ՀԱՅԵՐԵՆ ԵՐԳԵՆՔ ԲՈԼՈՐ ԱՇԽԱՐՀՈՒՄ»

պիտի նպաստենք ամենաբարձր արժեքի՝ հայրենիքի բարգավաճմանը, սիրենք ու պահպանենք լեզուն ու ավանդույթները, հավատն ու սերը առ երկիր, որն ամբողջ հայության հայրենիքն է: Հարց է առաջանում, իսկ ինչպե՞ս և ինչո՞վ կարելի է աջակցել երկրի կառուցմանը: Կա մեկ պարզ ճշմարտություն. յուրաքանչյուրս իր տեղում պետք է կատարի իր գործը:

Ուրեմն մենք հայոց լեզվի ուսուցիչներս, ունենք ոչ պակաս կարևոր առաքելություն. ձևակառուցողական օտարափոխում հայտնված հայ մանուկներին մենք պայան հայրենիք ուսուցանելու ամենապատվաբեր գործը, Լարեկացու ու Թումանյանի լեզուն հայ ազգի փոքրիկ իրավահաջորդներին փոխանցելու պատիվը:

Նոր ուսումնական տարվա մեկնարկը նույնքան հուզիչ էր, ինչպես դա լինում է տարեվերջյան հանդեսին, երբ օտարության մեջ ծնված երեխան հայախոս թոթովում է.

Սիրում եմ քեզ,
Հայոց լեզու,
Մայրիկիս պես
Անուշ ես դու...

Այո, մայրիկներից շատ բան է կախված, ուստի ուզում եմ շնորհակալություն հայտնել այն հայ մայրերին, որոնք ջանք ու եռանդ չեն խնայում ընտանիքում և կիրակնօրյա խմբակներում իրենց երեխաներին տալու հայեցի կրթություն ու դաստիարակություն: Ուզում եմ շնորհավորել նաև իմ գործընկեր-ուսուցիչներին, ովքեր մեծ դժբարություններ հաղթահարելով կատարում են իրրենց սուրբ պարտքը ուսուցանում են հայերեն, որ մեր բիբլիական լեզուն հարստ է և որ մեր մանուկները «Հայերեն երգենք բոլոր աշխարհում...»:

Սոնա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Թիվ 81 դպրոցի հայոց լեզվի «Արևիկ» խմբակի ուսուցչուհի



Դոնի Ռոստովի թիվ 19 գիմնազիայի հայոց լեզվի «Արևիկ» խմբակի սաները (Ուսուցչուհի Լուսինե Պետասյան):

Սկսվեց նոր ուսումնական տարին: Հայ երեխաների առջև կրկին իր դերերը բացեց նաև Ռոստովի թիվ 19 գիմնազիայում գործող հայոց լեզվի «Արևիկ» խմբակը:

Հպարտության զգացումները պատել էր թե՛ երեխաներին, թե՛ ծնողներին: Մեծ ձեռքբերում է հայրենիքից հեռու ունենալ մայրենի լեզուն տարածելու, պահպանելու, սերնդեսերունդ փոխանցելու հնարավորություն:

Մենք հինավուրց ժողովուրդ ենք և դարերով մեր լեզուն ու խոսքն է, որ պահել ու պահպանել է ազգը: Այսօր աշխարհի որ մասում էլ լինենք, պարտավոր ենք մեր ընտանիքներում խոսել հայերեն, ունենալ հայեցի դաստիարակություն: Տանը, փողոցում, ամենուր-ամենուր խոսենք անաղարտ հայերենով, հայ երիտասարդի մեջ սերմանենք մայրենիի նկատմամբ անսահման սեր, սրբացնել այն:

Շնորհավոր բոլորիս նոր ուսումնական տարին: Եվս մեկ անգամ մեծարենք ու փառաբանենք մեր մեծաքանակ մայրենին՝ հայերեն խոսելով:

Լուսինե ՊԵՏԱՆՅԱՆ
Թիվ 19 գիմնազիայի հայոց լեզվի «Արևիկ» խմբակի ուսուցչուհի

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՏՈՆԻ,
ՄԻՐԵԼԻ՝ ՈՒՍՈՒՑԻՉ

Դոնի Ռոստովի թիվ 61 դպրոցի հայոց լեզվի «Արևիկ» խմբակի սաները (Ուսուցչուհի Արմինե Հովսեփյան):

դրվողի անպարտելիության ու կեցության գաղտնախորհուրդ հավատքի սերնդեսերունդ ներարկումը: Դուք, որ քաջ գիտակցում եք այսօր դպրոցի առջև դրված բավականին լուրջ գործի կոչող իրավիճակը, գիտենք, որ մեր դպրոցներում պետք է թագավորի չորս պաշտանմունք՝ հայրենիքի, մարդու, գրքի, մայրենի լեզվի:

Գիր ու գրականության, դպրոցի և ուսուցչի դարավոր պաշտանմունք ունեցող ժողովուրդն է ձեզ ուսուցիչ կարգել: Ուսումնական տարվա գանգի յուրաքանչյուր դրոշմը թող ձեզ համար հնչի գալիքի համար լույսի սերմեր շաղ տալու բարի ակնկալիքով:

Հիշենք ու հպարտանանք, որ Կյանքում բոլոր յուսե մարդկանց Ուսուցիչ անունն են տվել...

Շնորհավոր ք տոնը, սիրելի՛ ուսուցիչ:
Մտղական խորհուրդ
Գ. Դոնի Ռոստով